«Այբ» ավագ դպրոց

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2025 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**
Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է **4** տպագիր էջից:

Առաջադրանք 1 Սիրելի՛ դիմորդ, ստորև ներկայացված է մի հատված Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունից: Կարդա՛ այն և պատասխանի՛ր հարցերին:

Ապա Տիտանյան Բելը զորք հավաքեց Հայկի դեմ և հետևակ զորքի մեծ բազմությամբ եկավ, հասավ հյուսիս՝ Արարադի երկիրը՝ Կադմոսի տան մոտ: Կադմոսը փախուստ տվեց Հայկի մոտ՝ իրենից առաջ արագագնաց սուրհանդակներ ուղարկելով:

...Իսկ Բելը հանդուգն ու անճոռնի, ամբոխի զորությամբ, ինչպես մի հեղեղ, որ զառիվայրից ներքև է թափվում, շտապում էր հասնել Հայկի բնակության սահմանները՝ վստահ լինելով զորավոր մարդկանց քաջության և ուժի վրա: Այս ժամանակ ուշիմ ու խոհեմ հսկան՝ գեղագանգուր մազերով, վառվռուն աչքերով, շտապով հավաքեց իր որդիներին ու թոռներին՝ թվով շատ նվազ, քաջ և աղեղնավոր մարդկանց և ուրիշների, որ իրեն էին ենթարկվում, գնաց հասավ մի ծովակի ափ, որի ջրերը աղի են և մանր ձկներով հարուստ: Եվ իր զորքին ձայնելով՝ ասաց.

— Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի բազմության մեջ, որպեսզի կա՛մ մեռնենք, և մեր ազգը Բելի ծառայության տակ ընկնի, կա՛մ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի, և մենք հաղթություն տանենք:

Եվ ամբողջ ասպարեզներ դեպի առաջ անցնելով՝ հասան շատ բարձր լեռների միջև մի դաշտաձև տեղ: Եվ ջրերի հոսանքի աջ կողմում՝ բարձրավանդակի վրա ամուր դիրք գրավելով, գլուխները վեր բարձրացնելով՝ տեսան Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիրուցան սուրում էր երկրի երեսի վրա, իսկ Բելը մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում՝ մի բլրակի վրա՝ իբրև դիտանոցում:

Հայկը ճանաչեց սպառազինված ջոկատի խումբը, որտեղ Բելը մի քանի ընտիր և սպառազինված մարդկանցով ամբոխի առաջն էր անցել, և երկար տարածություն կար նրա ու ամբոխի միջև: Նա կրում էր եզրանշաններ ունեցող երկաթե գլխանոց, թիկունքի և կրծքի վրա՝ պղնձե տախտակներ, սրունքների և թևերի վրա՝ պահպանակներ, մեջքին կապել էր գոտի, որի ձախ կողմից կախված էր երկսայրի սուրը: Իր աջ ձեռքում բռնել էր հսկայական նիզակը, իսկ ձախում՝ վահան, նրա աջ և ձախ կողմում ընտիր զորականներ էին:

Հայկը, տեսնելով լավ սպառազինված Տիտանյանին և նրա աջ ու ձախ կողմի ընտիր մարդկանց, կանգնեցրեց Արամանյակին երկու եղբայրներով աջ կողմը, Կադմոսին իր ուրիշ երկու որդիներով՝ ձախ կողմը, որովհետև աղեղ և սուր գործածելու մեջ կորովի մարդիկ էին, ինքը կանգնեց առջևից, իսկ մյուս բազմությունը կանգնեցրեց իր ետևում, դասավորեց մոտավորապես եռանկյունաձև և հանդարտ առաջ շարժվեց:

Եվ երկու կողմի հսկաները, միմյանց հասնելով, երկրի վրա ահագին դղրդյուն բարձրացրին գրոհելով, և իրար վրա ահ ու սարսափ գցեցին իրենց հարձակումների ձևերով:

Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ, սրի բերանի հանդիպելով, թավալվում, ընկնում էին գետնին, իսկ ճակատամարտը երկու կողմից էլ անլուծելի էր մնում:

Այս անսպասելի սարսափելի դիպվածը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց և ետ քաշվելով, սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր, որովհետև մտածում էր ամբոխի մեջ ամրանալ, մինչև ամբողջ զորքը հասնի, որպեսզի նորից ճակատամարտ տա: Աղեղնավոր Հայկը, այս բանը հասկանալով, իրեն առաջ նետեց, մոտ հասավ արքային, մինչև վերջ քաշեց լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցրեց նրա կրծքի տախտակին, և սլաքը, շեշտակի անցնելով նրա թիկունքի միջով, գետին խրվեց, և գոռոզացած Տիտանյանը այս կերպով կործանվեց, ընկավ վայր ու շունչը փչեց: Իսկ ամբոխը, այս մեծ քաջագործությունը տեսնելով, խուճապահար փախավ:

Հարց 1. Ի՞նչ կառուցվածք ունի Մ.Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունը։

Մ.Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունը բաղկացած է երեք գլուխներից՝ «Հայոց մեծերի ծննդաբանությունը», «Միջին պատմություն մեր նախնիների», «Մեր հայրենիքի պատմության ավարտը», և ««Ողբ» հավելվածից։

(2 միավոր)

Հարց 2. Ովքե՞ր են եղել Մ.Խորենացու երկու մեծագույն ուսուցիչները։

Խորենացու երկու մեծագույն ուսուցիչներն են եղել Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը։

(2 միավոր)

Հարց 3. Ինչո՞ւ ենք Մ.Խորենացուն անվանում «պատմահայր», «քերթողահայր»։

Մ.Խորենացին առաջինն էր, որ գրեց մեր պատմությունը՝ մեր ծագումնաբանությունից մինչև իր ապրած ժամանակաշրջանը՝ Ջրհեղեղից մինչև 5-րդ դար։ Նա շարադրել է հայոց պատմությունը սեղմ, գիտական ճշգրտությամբ, ճիշտ ժամանակագրությամբ։ Խորենացին նաև մոռացումից փրկել է հայ բանահյուսական անգիր հատվածներ՝ «Գողթան երգերը»։

(2 միավոր)

Հարց 4. Գնահատի՛ր Հայկի ռազմակոչը՝ ուղղված իր զորքին։

Ազատ շարադրանք, որտեղ դիմորդը պետք է շեշտի Հայկի՝ հմուտ ռազմագետ լինելը, մահը ստրկացած ապրելուց գերադասելը, հաղթանակի արժեքի գիտակցումը։

(2 միավոր)

Հարց 5. Ըստ Մ.Խորենացու՝ մինչև զորքով Հայկի դեմ արշավելը Բելը իր որդուն ուղարկել էր Հայկի մոտ՝ նրանից պահանջելով հնազանդվել իրեն և ապրել, որտեղ ցանկանում է։ Հայկը նրան խստությամբ էր պատասխանել։ Հանդես գալով Հայկի անունից՝ 5-6 նախադասությամբ շարադրի՛ր Հայկի մերժման խոսքը Բելին՝ հիմնավորելով քո որոշումը։

Ազատ շարադրանք, որտեղ պետք է երևան.

ա. Դիմորդի՝ «Հայկ և Բել» պատումին ծանոթ լինելը (նախ Բաբելոնում Հայկի ապրելը, ապա իր համար ցուրտ հյուսիսում բնակության վայր ընտրելը և խուսափելը Բելի ենթակայությունից) (2 միավոր)

բ. Հայկի ազատատենչությունը, որևէ մեկի ենթակայության տակ ապրելու անհնարինության գիտակցումը (2 միավոր)։

(4 միավոր)

Հարց 6. Համեմատի՛ր Հայկին և Բելին՝ ըստ մարտը վարելու նրանց ռազմավարության։ Ինչպիսի՞ հատկանիշներ կառանձնացնես յուրաքանչյուրի համար։

Նախ՝ Խորենացին շեշտում է երկու կողմի հսկա լինելը. նա Բելին անվանում է հսկա, Տիտանյան, ահռելի՝ նրան դարձնելով Հայկին հավասար հակառակորդ։ Հատվածում ակնհայտ է, որ Բելը վստահում է իր զորքի զորությանը, քաջազուն մարտիկների ուժին։ Իսկ Հայկը հույսը դրել է նախ՝ իր, ապա՝ իր զինակիցների վրա։ Բելը, չնայած հսկա է, բայց վախկոտ է ու եսասեր։ Նա կանգնած է մարտի դաշտից բավականին հեռու՝ մի բլրի վրա՝ շրջապատված լավ զինված մարդկանցով, որ կարծես նրա թիկնապահները լինեն։ Նա եկել է՝ մարտը դիտելու, ոչ վարելու։ Խորենացին նկարագրում է նրա հանդերձանքը, որից հասկանում ենք, որ այդ ամբողջ պաշտպանական հագուստի տակ թաքնված է վախկոտ ու փոքրոգի մեկը։ Իսկ Հայկը քաջ է ու իսկական առաջնորդ, որովհետև կանգնած է իր փոքրաթիվ զորքի առջևում և իր օրինակով է ցույց տալիս՝ ինչպես է պետք կռվել։ Բելը նաև գոռոզ է ու մեծամիտ, որովհետև իր քաջ մարդկանց վրա հույսը դնելով՝ կարծել է, որ հեշտությամբ կհաղթի Հայկին, ու չի սպասել հիմնական զորքի ժամանելուն։ Միայն երբ տեսավ, որ ճակատամարտը չի կարողանում հաղթել, որոշեց հետ քաշել իր զորքը ու սպասել ամբողջ բանակի հասնելուն, որ ավելի մեծ ուժով հարձակվի Հայկի վրա։ Այստեղ երևում է նաև Հայկի հեռատեսությունը, քանի որ նա կռահեց Բելի մտադրությունը ու թույլ չտվեց իրագործել այն՝ սպանելով գոռոզամիտ հսկային։

(4 միավոր)

Առաջադրանք 2 Սիրելի՛ դիմորդ, ստորև ներկայացված է մի հատված Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմից։ Կարդա՛ այն և պատասխանի՛ր հարցերին։

Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ
Աշխարհքի վըրա, Ջավախքի վըրա,
Ավերակ բերդին, սև ամպի նըման,
Ծուխն ու թըշնամին չոքել են ահա։

Հաղթության փառքով ու գինով հարբած
Քընած են բերդի և՛ զորքերն, և՛ տեր,
Ու հավիտյան էլ մընացին քնած,
Դավին անտեղյակ, ցավին անտարբեր։

Նըստած է Շահը. նըրա առաջին
Ահա իրիկվան քեֆի սեղանը.
Նայում է Շահը անտեր գահույքին,
Մտքովն անցնում է աշխարհքի բանը։

Աշխարհում հաստատ չըկա ոչ մի բան,
Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին,
Ո՛չ բախտի, փառքի, ո՛չ մեծ հաղթության,
Ո՛չ սիրած կնկա տըված բաժակին…

Ու լի դառնությամբ հարցընում է նա
Դալուկ, մարմարիոն Թըմկա տիրուհուն.
— Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սևաչյա,
Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն…

— Քաջ էր ու սիրուն քեզնից առավել.
Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա.
Կնոջ մատնությամբ ամրոց չէր առել,
Չէր եղել կյանքում երբեք խաբեբա…

Էսպես տիկինը տըվավ պատասխան.
Անհուն ցասումից մըռընչաց Շահը.
— Հե՛յ, դահի՛ճ,- գոռաց գազանի նըման.
Դահիճը իսկույն մտավ սրահը։

Հարց 1. Պոեմի ո՞ր տեսակին է պատկանում «Թմկաբերդի առումը» պոեմը։ Ինչո՞ւ, հիմնավորի՛ր պատասխանդ։
«Թմկաբերդի առումը» պոեմը պատկանում է պոեմի քնարապատմողական (քնարաէպիկական) տեսակին (1 միավոր), քանի որ այն ունի հստակ զարգացող գործողությունների շարք՝ դիպաշար, բայց նաև ներկայացնում է հեղինակի հույզերը, խոհերը, կերպարների ապրումները (1 միավոր)։

(2 միավոր՝)

Հարց 2. Հատվածից դո՛ւրս գրիր հ***ամեմատություն, մակդիր, փոխաբերություն*** պատկերավորման միջոցներից մեկական օրինակ՝ յուրաքանչյուրի կողքին նշելով տեսակը։
Սև ամպի նման, գազանի նման - համեմատություն
անհուն ցասում, **մարմարիոն** տիրուհի - մակդիր
ծուխն ու թշնամին չոքել են ահա, հաղթության փառքով և գինով արբած - փոխաբերություն (կան նաև այլ օրինակներ)

(3 միավոր)

Հարց 3. ***Նայում է Շահը անտեր գահույքին,// Մտքովն անցնում է աշխարհքի բանը:*** Բացատրի՛ր՝ ում գահույքն է անտեր մնացել։ Ինչի՞ մասին է մտածում Նադիր շահը, և ինչպիսի՞ տրամադրություն է պաշարում նրան։
Անտեր է մնացել Թաթուլ իշխանի գահույքը, որին նախորդ գիշեր դավադրաբար սպանել են (1 միավոր)։ Նադիր շահը մտածում է կյանքում ամեն ինչի անցողիկության, անհաստատության ու ժամանակավոր լինելու մասին, հասկանում է, որ ոչնչի վստահել չի կարելի (1 միավոր), և սիրտը լցվում է դառնությամբ, տխրում է, քանի որ գիտակցում է, որ իր փառքն էլ է անցողիկ ու ժամանակավոր (1 միավոր)։

(3 միավոր)

Հարց 4. Ինչպե՞ս կմեկնաբանես Թմկա տիրուհու պատասխանը։

Ազատ շարադրանք, որտեղ դիմորդը կանդրադառնա Թաթուլի և Նադիր շահի **համեմատությանը** (1 միավոր), Թմկա տիրուհու **զոջմանը** (1 միավոր), կփորձի որևէ կերպ մեկնաբանել այն (1 միավոր)։

(3 միավոր)

Հարց 5. Ինչպե՞ս է պատժվում Թմկա տիրուհին։

Թմկա տիրուհուն հանեցին բերդից դուրս, բարձր ժայռից գլորեցին խորունկ ձորը (1 միավոր)։ Գիշատիչ գազաններն ու թռչունները լափեցին նրա ազահ սիրտը ու հանեցին գեղեցիկ սև աչքերը (1 միավոր)։

(2 միավոր)

Հարց 6. Կապվու՞մ է այդպիսի ավարտը պոեմի հիմնական գաղափարի հետ։ Ինչպե՞ս. հիմնավորի՛ր պատասխանդ։

Այսպիսի ավարտը սերտորեն կապվում է պոեմի գաղափարի հետ, քանի որ պոեմում արծարծվում են բարի ու չար գործեր կատարելու, մարդու կոչման, նրա արարքները հիշելու խնդիրները (1 միավոր), նաև հերոսականության, ազահության, դավաճանության թեմաները (1 միավոր)։ Այս ավարտը ցույց է տալիս նախ՝ դավաճան արարքի վախճանը, ապա՝ վատ արարքը անեծքով հիշելու փաստը (1 միավոր)։

(3 միավոր)